Ա Պ Ե Ր

ՊԱՏՏԱՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱՎԱՐԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Ե Ւ

ՅԱՒԵԼՒԱԾՈՎ

Դաստիարակների համար.

ՏԱՍՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐՒ

№ 11

ՆՈՅԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

Типографія И. А. Мартиросіанца. Орбел. ул., домъ № 1–2

1895

Дозволено цензурою. Тифлисъ. 15-го ноября 1895 года.

† ՏԻԿ. ԿԱՏԱՐԻՆԷ ԵՒԱՆԴՈՒԼԵԱՆ

ՃՇԳՐԻՏ ԱՆՑԿ

Աղջկան երկու տարի էր, որ Ն. Վ. գիւղում ծխական դպրոց կար և Վարեգինն ու Անեքերիմը այդ դպրոցի առաջադէմ աշակերտներն էին համարւում... Նրանք միանգամայն սիրելի էին թէ ուսուցիչներին և թէ բոլոր ընկերներին, որովհետև ամեն օր անսխալ դաս էին պատասխանում, ծոյլ ընկերներին խրատում, իսկ թոյլերին օգնում: Նրանք երբէք ընկերոջ «սրտին» չէին պիտել, ոչ ոքի չէին նեղացրել...

Այսիա ամիսը մօտենում էր իր վախճանին և այդ դպրոցի աշակերտները պատրաստւում էին տարեկան քննութեան համար: Մի օր ուսուցիչը մօտեցաւ Պարեգինին ու Աննեքերիմին և զանազան հարցեր առաջարկելուց յետոյ ասաց.—«Իրենները, ես արդէն շատ անգամ ասել եմ և այժմ էլ նորից կրկրկնեմ, որ ուսումը մարդու համար ամենահարկաւոր բանն է. երանի՜ նրան, ով որ շարունակ կրճգտի ուսման և կաշխատի իր դիտութեան պաշարն աւելացնել: Բայց ուսում ասելով՝ դուք չըպէտք է հասկանաք այն, ինչ որ սովորել է.ք այստեղ՝ ծխական դպրոցում: Ձեր սովորածը դեռ ուսման առաջին սերմերն են, որ կարող են աճել և պտուղ տալ միայն այն ժամանակ, երբ դուք այստեղից կըգնաք աւելի բարձր ուսումնարան և միևնոյն ջանասիրութեամբ կը շարունակէք աշխատել ու նորանոր բաներ սովորել: Մի քանի օրից յետոյ դուք վկայականներ ստանալով, կըհեռանաք այս ուսումնարանից. սակայն չըպէտք է հեռանաք ուսումից, այլ ընդհակառակը՝ աշխատեցէք, ամեն կերպ պատրաստուեցէք մի որ և է միջնակարգ դպրոց մտնելու համար»...

Դեռ խօսքը չէր վերջացրել ուսուցիչը, երբ Պարեգինը սրտից խորը ա՜խ քաշեց և ասաց.—«Հա՜ատ լաւ, պ. վարժապետ. բայց դուք

ինքներդ էլ գիտէք, որ մեր ծնողները օրական չոր հացի անգամ կարօտ են և անկարող են մեզ ուրիշ տեղ ուսման ուղարկել. Հարուստ բարեկամ կամ աղգական էլ չունենք, որ օգնեն, ուրեմն ի՞նչ կարող ենք անել»...

«Այդ բոլորն էլ ոչինչ է»—շարունակեց ուսուցիչը—«մարդու եռանդն ու աշխատանքը դրեթէ ամեն բանի կարող են յաղթել: Եթէ դուք սրտանց կամենաք ձեր ուսումը շարունակել՝ օգնողներ էլ կը ճարուեն և դուք վերջ ի վերջոյ կը հասնէք ձեր նպատակին: Ձեզ օրինակ վերցրէք ռուսաց առաջին յայտնի գիտնական Լոմոնոսովին, որի ծնողները նոյնպէս գիւղացի էին և աղքատ. բայց նա ծնողների կամքին հակառակ՝ գիշերով փախաւ տանից և Մոսկւա գնալով՝ բարեպատ մարդկանց օգնութեամբ ուսում առաւ և վերջապէս երևելի մարդ դարձաւ»...

Այդ րոպէին լսեց զանգակի ձայնը և աշակերտները խումբ-խումբ դասարան դիմեցին և, սակայն ուսուցչի հետաքրքիր խօսակցութիւնը այնպէս էր գրաւել փոքրիկ ունկնդիրների ուշադրութիւնը, որ նրանք ո՛չ զանգի ձայնն էին լսել և ո՛չ ընկերների ներս գալը տեսել: Վերջապէս ուսուցիչը փակեց խօսակցութիւնը, ասելով. «Դէհ, գնանք դասի, ասածներս լաւ միտներդ պահեցէք և հաւատացած եղէք, որ ես

միշտ պատրաստ եմ ձեզ օգնելու, որքան որ կարող եմ։»

Անցաւ մի քանի օր... Հարցաքննութիւնը վերջացաւ և աշակերտները ցրուեցին. ուսուցիչն էլ բաղաք գնաց. իսկ նրա խօսքերը անջնջելի կերպով տպւեցին Կարեգինի ու Աննեքերիմի սրտերի մէջ և նրանք գիշեր-ցերեկ մտածում, իրար հետ խորհրդակցում էին, որ անպատճառ Տփխիս գնան՝ Ներսիսեան դպրանոցը մտնելու համար։ Քանի մօտենում էր սեպտեմբեր ամիսը, այնքան էլ սաստկանում էր այդ ուսումնասիրաւ պատանիների մտատանջութիւնը։ Վերջապէս օգոստոսի 20-ին նրանք դիմեցին ուղղակի բաղաք՝ իրանց կարեկից ուսուցչի մօտ, նրան իրանց որոշումը յայտնելու, խորհուրդ հարցնելու և օգնութիւն խնդրելու համար։ Ուսուցչի ուրախութեանը չափ չկար։ Նա իսկոյն և եթ գրեց խնդիրները, պատրաստեց հարկաւոր վկայագրերը։ Այդ ամենագլխաւորը, այսինքն ճանապարհածախսի համար հարկաւոր փողը պակասում էր և ուսուցիչը երկար մտածում էր դրան էլ մի ճար գտնել։ Այդ նկատելով, Աննեքերիմը ասաց.—«Պ. վարժապետ, խնդրում ենք փողի համար նեղութիւն չքաշեք. մենք ոտով կըգնանք»...

—«Չէ՛, սիրելիս, այդ ահագին ճանապարհը չէք կարող ոտով գնալ»։

—«Ո՛չինչ, մեռնելներս էլ որ պիտենանք, դարձեալ կըգնանք: Դուք միայն աշխատեցէք, որ անպատճառ ընդունենք և այնտեղ ապրելու միջոց ունենանք»...

Առանց ուշք դարձնելու այդ խօսքերին, ուսուցիչը մի քանի ռուբլի տուեց նրանց և երեք օրից յետոյ Ս—ից Տիխխա տանող ճանապարհով առաջ էին գնում Գարեգինն ու Սենեքերիմը՝ մէջքերին հացով լի թաշկինակներ կապած և ձեռքերին մէկ մէկ ափափին ցուպ առած: Ընթանալով սաստիկ շոգին՝ նրանք ուրախ ու արագ առաջ էին քայլում և մերթ խօսակցում ուղեկցող ուսուցչի հետ: Երրդին երեք վերստ հեռացել էին քաղաքից, երբ ուսուցիչը տուեց նրանց մի քանի յանձնարարական նամակներ և յայտնեց իր վերջին պատուէրը: Գարեգինն ու Սենեքերիմը արտասուք աչքերին ճնաս բարով ասացին իրանց սիրելի և հոգատար ուսուցչին և շարունակեցին ճանապարհը:

Մի քանի շաբաթից յետոյ այդ ուսուցիչը Տիխխից ստացաւ հետևեալ նամակը.

Վարժապետ ջան.

«Մենք այժմ շատ երջանիկ ենք, որովհետև հասանք մեր նպատակին. մենք ընդունեցինք Ներսիսեան դպրանոցում: Նարեգործական ընկերութիւնն էլ որոշեց ամսական 5-ական ռուբլի նպաստ տալ մեզ: Երրդին տասն օր է,

որ կանոնաւոր պատերը սկսել են և ուսուցիչները շատ պոհ են մեզանից: Առաջանք յայտնել, որ քաղաքից Դիլիջան ոտով պնացինք: Այդտեղ մեզ պատահեց մի հայ ատաւճանաւոր, հարց ու փորձ արեց, թէ ո՞ւր ենք գնում և երբ մենք ամեն ինչ պատմեցինք, նա երեք ուսբլի նուիրեց, որով և կառք վարձեցինք և դրանով գնացինք մինչև Ազատաֆա, իսկ այդտեղից երկաթուղի նստեցինք և ամսի 28-ին յաջողութեամբ հասանք Տփխիս...

Վերջապէս այժմ շատ ու շատ բախտաւոր ենք, միայն ձեր կարօտն ենք քաշում: Ա՛խ, ո՛րքան կարօտացել ենք ձեզ:

Ձեր աշակերտներ Գարեգին, Սեմեքերիմ:

Ե. ԹՈՓՉԵԱՆ

ԱՂՂԻ ԽԱՂԵՐԸ

(Ժողովրդական մոտիւներ)

Չոլերն առան, սար ու ձարեր,
Ամպերն եկան, մութն ընկաւ.
Անգին մէրմիկ, հերիք յուսաս,
Քու շողշողուն աստղն ընկաւ:

Լաց, մերիկ ջան, որ էլ չեմ գայ,
Վէրքը սրտիս տուն չեմ գայ:

Կաթիլ-կաթիլ ամպն է ցօղում
Սև ու պղտոր երկնքից.
Մաղիկ-մաղիկ վէրքս է ծորում
Իմ անդիման, սև սրտից.

Լաց, մէրմիկ ջան, որ էլ չեմ գայ,
Վէրքը սրտիս տուն չեմ գայ:

Անգութ կեանքում վէրք ստացայ
Սրտանց սիրած ընկերից.
Անխիղճ կեանքում վէրք ստացայ
Անհուշ սիրած քոյրիկից...

Լաց, մէրմիկ ջան, որ էլ չեմ գայ.
Աղիղ բալէդ էլ չըկայ...

ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԹՌՉՆԱԿԻ ՎԻՇՏԸ

Վաւվաւէն նստել էր պատուհանում և ուշադրութեամբ հետևում էր ուրախ թխթխեռնիկների խաղին, որոնք խայտում էին և պտտում օդի մէջ:

«Այդ ինչպէս է, որ նրանք չեն յոգնում,—մտածեց աղչիկը,—ահա կէս ժամ է, որ ես նայում եմ նրանց. նրանք առաջւայ պէս դարձեալ պտտում էին և մէմեանց հետքից վազում: Բայց, վերջապէս, ահա նրանք նստեցին ծառի տերևների վրայ: Տեսնենք, արդեօք, երկար կընստին նոյն տեղը»:

Բայց Վաւվաւի ուշադրութիւնը շուտով հեռացրեց թխթխեռնիկներից մի ուրիշ բան: Նա ծառի վրայ նկատեց մի քանի թռչուններ, որոնք, կարծես, հանգստանում էին: Յանկարծ նրանք բոլորը թրպրտացին և մի ընդհանուր ճռւողոցով աղջուներին դէպի իրանց թռչող փոքրիկ թռչնակին: Նորեկ թռչնակը նստեց իր ընկերուհիների հանդէպ և սկսեց անհանգիստ կերպով կչկչալ, այն ինչ միւսները ոչինչ ձայն չէին հանում:

«Ի՜նչքան տարօրինակ է այդ,—բացականչեց Վաւվաւէն,—կարելի է մտածել, որ այդ թռչնակը պատմում է մի շատ հետաքրքիր բան, իսկ մնացեալը ուշադրութեամբ լսում են նրան: Այ, այ, նրանք ինչպէս գլուխները կախեցին, երևի այդ փոք-

ըիկ Թուչնա՛լը նրանց մի տխուր բան է պատմում։ Որքան ցաւում եմ, որ ես Թուչունների լեզուն չեմ հասկանում», ասաց նա լջնելով պատուհանից։ Իսկ փոքրիկ Թուչնակը, երբ որ պատմում էր նրանց մի տխուր նորութիւն. ահա թէ ինչ էր նա ասում. «Դեռ երէկ իմ Թանկագին ընկերուհուս հետ միասին մենք ուրախ ծնծւում էինք և վայելում ազատութիւն։ Հազիւ դադարեց անձրևը տեղալուց, մեզ ոչինչ չըմտրչեց, որովհետև մենք նստել էինք կաղնու ճառի Թաւ ոտների մէջ, որ մեզ պահում էր այնքան լաւ, որքան կարող էր մի լաւ ամուր տանիք։ Մեզանից ներքև հողը սկսեց բոլորովին ճաքճքել, և ես նկատեցի, թէ ինչպէս նրա մէջ որդերը շարժւում էին. բայ երևոյթին այնպիսի ախորժելի, որ ես չըկարողացայ դասել ինձ և ասացի ընկերուհուս.

«Թուչենք հողի վրայ և ճաշակենք ահա այն հաստ, պարարտ որդը, քանի նա դեռ չի թաղուել տերևների մէջ»։ Ես արդէն պատրաստւում էի կատարել իմ դիտաւորութիւնը, երբ ընկերուհիս կանգնեցրեց ինձ ասելով.

«Թող անպիտան որդը թաղուէ աւելի խոր, ինչքան որ կարէ։ Ես մի պատուհան դիտեմ, ուր միշտ Թափթփւած են լինում համեղ հատիկներ և սպիտակ հացի փշրանքներ։ Աւելի լաւ է Թուչենք դէպի այնտեղ, ասպա Թէ ոչ յանդուգն ծառերը բոլորը կըհաւաքեն և մեզ համար ոչինչ չեն պահիլ»։

Եւ չբսպատեղով իմ պատասխանին՝ նա անյայտացաւ իմ աչքերից։ Ես նրան չըհետևեցի։ Ի՞նչու Թուչեմ, ինձ համար արդէն ամբողջ անտառը մի պատրաստի սեղան էր և պաշարը հարիւր Թուչունի էս բաւական էր։ Անուշ ճաշով կշտանալով, ես դարձեալ նստեցի նոյն ոտի վրայ և սկսեցի սպասել իմ ընկերուհուս։ Բայց, աւաղ, անցաւ ամբողջ դիշերը և նա դեռ չէր վերադառնում։ Անհամբերութիւնից տանջւած, ես չըկարողացայ փակել աչքերս և ահա այսօր, հէնց որ արևը երևեցաւ սարի ետևից, ես Թռայ որոնելու իմ սիրելի ընկերուհուս։ Մեծ դժւարութեամբ վերջապէս ես դտայ այն պատուհանը, որ դէպի իրան էր դրաւում ցիմար Թուչնակներին։ Բայց ինչ պատկերացաւ իմ աչքերին. իմ ընկերուհին, իմ սիրելի ընկերուհին նստած էր վանդակում և կտուցով անօգուտ ծեծում էր երկա-

թեալ ձողերը, այն ինչ յանդուգն ծառերը ուղիղ նրա դիմացը կտցահարում էին վայրի թռչուած հաւտիկները»:

«Օհ, թանկագին քոյրիկ, ասացէք, ինչ կըլինի: Ես ինչ պիտի անեմ, դանգատելով վերջացրեց իր պատմութիւնը փոքրիկ թռչնակը: Բայց ոչ մէկը նրան բարի խորհուրդ չըտուաւ, նրանք նստել էին գլուխները կախած, տխուր և լուռ էին, միայն դրանցից պատաւ թախծալի թռչունը մտմտաց.

«Ահա, թէ ինչ բանի է հասցնում ազահութիւնը»:

«Այ, ահա թէ ես ինչ կանեմ,—զոչեց որը ու այրիացած թռչնակը,—կըթռչեմ պատուհանի մօտ և այնպէս լաւ կերգեմ իմ ամենալաւ երգերը, մինչև որ նրանք բաց կըթողնեն իմ թանկագին ընկերուհուս, կամ թէ ես ինքս էլ կըմեռնեմ վըշտից միևնոյն պատուհանի առջև:

Եւ այն օրւանից հաւատարիմ թռչնակը չըհեռացաւ պատուհանից, որի մէջ նստած էր իր ընկերուհին, և խլացրեց օդը այնպիսի հրաշալի ձայներով, որ ամենքը սենեակում նրա վրայ ուշադրութիւն դարձրին:

«Մայրիկ,—ասաց աղջիկը,—որին պատկանում էր վանդակը, ինչու իմ այս թռչնակը միշտ լուռ է, իսկ այն թռչնակը այնպէս լաւ և տխուր երգում է: Գուցէ նա իմ թռչնակի քոյրն է և կանչում է նրան իր մօտ: Թոյլ տուր ինձ արձակեմ նրան, ես խղճում եմ երբ նրան այս նեղ վանդակում փակուած եմ տեսնում»:

Եւ առաջ քան մայրը կարողացաւ պատասխանել, աղջիկը բացաւ դռնակը և մի ակնթարթում երջանիկ թռչնակը արդէն իր ընկերոջ կողքին էր գտնւում: Երկուսը միասին այնպէս լաւ երգեցին, որ փոքրիկ աղջիկը հասկացաւ, թէ ինքը մի բարի գործ կատարեց: Թռչնակին արձակելով, և հէնց այնտեղ էլ նա իրան հաստատ խօսք տւաւ խեղճ թռչնակներին երբէք չըփակել վանդակում, չը զրկել նրանց այն ազատութիւնից, որ այնպէս ողորմածութեամբ Տէր Աստուածը նրանց պարգևել է:

Թարգմ. ԵՐՄԵՆՈՒՀԻ

ԵՃՆԿԻԻ *) ԽՐԱՏՆԵՐԸ ԻՐ ՈՐԴՈՒՆ

Նիւ-Եորկ, 3. I. 88.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՈՐԴԻ,

Դու «այնքան մեծ ես, որ կարող ես ոտների վրայ Հաստատ կանգնել», ինչպէս ինձ ասեց նաւապետ Նաթանը, երբ 1855 թուականին ես նրա մօտ մտայ իբրև նաւի փոքրատոր։ Ես տնից վախայ, և ուղիղ քեզ Հասակակից էի։

Յոյս ունեմ, որ դու մենակ զլուխդ կը-պահես։ Ես այսօր երկաթուղի պիտի նստեմ 10 ժամ 25 րոպէին և դնամ դէպի խաղող Ռիկլանոսի ափերը։ Ժամանակ չունեմ երկար նամակներ գրելու, բայց երբեմն քաց նամակներով կուղարկեմ քեզ իմ խրատները։

Կանոն 1-ին. Աշմարտախօս եղիր.

Կանոն 2-րդ. Սիրող բաց պահիր։

«Verbum satis» (խօսքը բաւական է), ինչպէս ասում էր սրբագրողը, երբ 1868-ին ես գիւղում խմբագրում էի մի շաբաթաթերթ։

Քո հայր՝
Ջ.-Ա. ՉԵՍՏԵՐՖԻԼԴ.

---

*) Հիւսիսային ամերիկացուն անւանում են եանկին։

Լապւիլ (Կոլորադո), 17. I. 88.

ՍԻՐԵԼԻ ՈՐԴԻ,

Այստեղ սաստիկ ցրտեր են անում։

Ես շատ զոհ եմ, որ դու ուսումնասիրում ես կլասիկներին։ Լատիներէնն լեզուն լաւ կողմեր ունի։ Փնտրիր հեշտ ճանապարհը, և «ձիու բնաւորութիւնն ուսումնասիրիր», ինչպէս սում էր մի ձիապան 1875-ին, երբ ես ճանապարհորդում և պատահօսութիւնները էի կարդում «Հռօմի և լէֆորմի» մասին։ Մի վախիր յուսահատէն լեզուից, առաւել և այ որ, դու դեռ չես ծերացել։

Կանոն 3-րդ. Ամպագոյ դժբարութիւնների մասին մի մտածիր։ Դեռ գետը չհասած՝ ոտերդ մի հանիր։

Քո հայր՝

ՋՈՆ-ԱԴԱՄ ՉԵՍՏԵՐՖԻԼԴ.

P. S. Հանքեր եմ վերցրել շահադործելու համար։ Ե. Չ.

Չիկագոյ, 3. II. 88.

ՍԻՐԵԼԻ ՈՐԴԻ,

Շատ վշտացած եմ, իմանալով որ դու ծեծել ես այդ փոքրիկ Զմիդտին։

Դա մի փոքրիկ յիմար է, որ այնքան թոյլ և փափուկ է, ինչպէս 24 ժամ չրուած մնացած սապնի կտոր։

Ես ճանաչում էի դրա հօրը, որ ինձ հետ միասին կոնէկտիկուտ նահանգում երդւեալ դատաւոր էր։ Դա «աշխարհքից կրաճ մի մարդ» էր, ինչպէս ասում էինք այն ժամանակները, երբ ես ծառայում էի հեռագրատանը։

Կանոն 4-րդ. Որքան կարող ես, կռւից քեզ միշտ հեռու պահիր։

Կանոն 5-րդ. Եթէ չես կարող խոսափել կռւից, առաջինը դու խփիր, և կորիճի նման մտիր կռւի թռնդ տեղը։

Եթէ հաւաքնի դռնից մի աղէսի մորթի կախես, միւս աղէսները հեռու ման կըդան։

Քո հայր՝
ՋՈՆ-ԱԴԱՄ ՉԵՍՏԵՐՖԻԼԴ.

Օմահա, 18. II. 88.

ՍԻՐԵԼԻ ՈՐԴԻ,

Գաղափարնելրի տարբերութիւնն է, որ ստեղծել է ձիաշաւք։ Այս առածը յաճախ են կրկնում կէնտուկի նահանգում, ուր 1858-ին երկաթուղու վրայ ծառայում էի։ Այժմ ոլ ձմիռտի հետ հաշտուել ես, կակուղ վարվիր հետը։

Հանքը օրէցօր աւելի արդիւնք է տալիս։ Մի ժամում մի դոլլար (երկու րուբլի) զուտ օգուտ է տալիս ինձ։"

ՉԵՍՏԵՐՖԻԼԴ.

Պալաս Կար կայարան, 29. II. 88.

ՈՐԴԻ,

Հանքի գործը լաւ է դնում։ Սպասում է երկու մլիոն։ Հինգերորդ մասը հօրդ է պատկանում։ Բնականաբար՝ ես քեզ կուզարկեմ 10 դոլլար։

Կանոն 6-րդ. Միշտ կանխիկ դնիր։

Ես 1857-ին գործակատար էի մի վաճառականի մօտ։ Նկատում էի, որ այն վաճառականները, որոնք ապրանքը կանխիկ չէին դնում, վերջ ի վերջոյ միշտ ընկնում էին ճոռոմ անուղի մուրճի տակ։

Տեսչիդ ասա, որ ուսմանդ վճարը շուտով կուզարկեմ։

Քո հայր՝
Ջ.-Ա. Չ.

ԵԱՆԿԻ ՈՐՊԻՆ

Սան-Ֆրանցիսկո, 21. III. 88.

Ստացայ նամակդ: Ես լինքս սովորեցնում էի մի ուսումնարանում 66-ին, և նկատում էի, որ աշակերտները ինձնից լաւ էին լսանում:

Կանոն 7-րդ. Քո մասին մեծ կարծիք մի ունենալ:

Լուսապէմին աքաղաղը կանչէ—չկանչէ, միևնոյն է, արեգակը իր ժամանակին դուրս է գալու:

Քո հայր՝
Ջ.-Ա. ՉԵՍՏԵՐՖԻԼԴ.

Լաւէլ, 29. III. 88.

ՍԻՐԵԼԻ ՈՐԴԻ,

Անդլիը ալա ֆլանոելէն քերականութիւնը: Դժւար է այդ: Երբ ես 64-ին պինւոլ էի Բլլմոնդ բերդում, ուսումնասիրում էի ֆլանոելէն լեզուն, և անկանոն բայերը դժւարութեամբ էի իւրացնում: Բայց վերջ ի վերջոյ այդ դժւարութիւններին յաղթեցի: Ի՞նչ կըլինէր դրութիւնս առանց ֆլանոելէն իմանալու, երբ 76-ին հանապարհորդում էի Եւրոպայում, այնտեղ Կալիֆօրնիայի պինի ծախելու համար:

Կանոն 8-րդ. Որքան կարող ես, շատ օտար լեզուներ սովորիր:

Կանոն 9-րդ. Աչխատիր չմոռանալ քո լեզուն:

Քեզ սիրող՝
ՋՈՆ-ԱԴԱՄ ՉԵՍՏԵՐՖԻԼԴ

Չիկագօ, 30. IV. 88:

ՈՐԴԻ,

Անկարող եմ գրել, ժամանակ չըկայ: Մեծ շահագործութեան եմ ձեռնարկել իմ մի հին ընկերոջ մասնակցութեամբ, որի հետ լուսանկարիչ էի Բոստոնում 76-ին:

Ասում են, որ Բոստոնը լաւ ասպարէզ է ներկայացնում մեծամեծ ձեռնարկութիւնների համար։ Մենք էլ ձեռք պարկեցինք այդպիսի մի ձեռնարկութեան։ Տեսնենք վերև - յիշած վարձիքը ճիշտ դուրս կըգայ։

Ինչպէս ես անցնում մաթեմատիկան։

Քեզ սիր. Հ.
Ջ.-Ա. Չ.

Սէն-Լուի, 10. Ⅴ. 88.

ՈՐԴԻ,

Վստահում եմ, որ մաթեմատիկի ուսուցիչդ հետանում է. յոյս ունեմ, որ նրա յաջորդը աւելի ընդունակ կըլինի. 39-ին, երբ ես Հողաչափի էի, լաւ հասկացայ մաթեմատիկի նշանակութիւնը։

Հանքի գործերը օրէցօր աւելի լաւանում են։ Մեզ ընկերացել է մի մարդ, որ 67-ին Նիւ-Եօրկում Հրատարակում էր մի լրագիր, որի համար ես բեպորտեօր էի։

ՉԵՍՏԵՐՖԻԼԴ

Լոգվիլ, 29. Ⅴ. 88.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՈՐԴԻ,

Հանքը շատ օգուտ է տալիս։ Աշխատած վողը բոլորը պարձեալ դնում եմ այլ շահագործութեան մէջ, ինչպէս անում էր պ. Դանիէլը, որի հետ բանկային գրասենեակ էի պահում 72-ին։

Ես աջողութիւն ունէի։

Կանոն 10-րդ. Աջողութեան մէջ ամբողջապէս նկիրուիր գործին։

ԱԴԱՄ ՉԵՍՏԵՐՖԻԼԴ.

Լաւրիլ, 13. VI. 88.

Հանքի գործերը վատ են դնում: Չեմ յուսահատում: Բանկիի սրինն ունեմ: Մեռնելիս էլ հանկիին չէ յուսահատում, իսկ ես մի քիչ յոգնած եմ: Տեսչիդ ասա, որ ուսման վճարը կուղարկեմ մի կամ երկու շաբթից յետոյ:

Նիւ-Եորկ, 20. VI. 88.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՈՐԴԻ,

Մեր գործը ջուրն ընկաւ, և մնացածը իմ բաժին պատահեցաւ: Հայրդ այնպէս տղքատ է, ինչպէս էր 65-ին, երբ ես հրատարակեցի «Ազատամբութեան պատմութիւնը», կամ ինչպէս 73-ի վերջերքին, երբ ես ստիպուած էի գնալ Փիլիպս, որ մի կալուածատիրոջ նամընջի այգին պահի: Յանկանում եմ վերադառնալ տուն:

Հեռագրիր անմիջապէս՝ տեսնէդ մաթեմատիկի նոր ուսուցիչ է վարձել. եթէ ոչ, ես ինձ կուաջարկեմ:

Ես շատ ուրախ կըլինեմ, իմ սիրելի որդի, կրկին քեզ տեսնելու:

Քեզ սիրող քո հայր՝
ՋՈՆ-ՈՂԱՄ ՉԵՍՏԵՐՖԻԼԴ.

Նիւ-Եօրկի կենդրոնական կայարան, 21. VI. 88.

Հեռագիրդ ստացայ: Անկարելի է տեղը ընդունել: Ուզածիդ ուսմանդ վճարը: Այսօր 3 ժ. 45 րոպէ: Ճանապարհ եմ ընկնում դէպի Չինաստան, ուր տանում եմ ամերիկական նոր ապրանքներ:

Մանրամասնութիւնը շոգենաւից: Կըվերադառնամ 8 կամ 10 ամսից յետոյ, եթէ Աստուածը չըդնամ: Կարծում եմ, որ մեծ օգուտ կունենանք դեղերի վաճառումից:

Աստուած քեզ օրհնի, որդի:

Քո հայր՝
ՋՈՆ-ՈՂԱՄ ՉԵՍՏԵՐՖԻԼԴ

Թարգմ. ՅՈՎՀ. ՕՇԱՆԵԱՆ

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ

(Լև Տոլստոյից)

Ին ժամանակներում Երուսաղէմի մօտակայքում ապրում էին երկու հարազատ եղբայրներ: Մինչի անունն էր Աթանաս, իսկ վոքրինը՝ Յովհաննէս: Նրանք բնակւում էին քաղաքից ոչ հեռու, սարի վրայ և կերակրւում էին նրանով, ինչ որ տալիս էին մարդիկ: Եղբայրները ամբողջ օրերով շարունակ աշխատում էին և այն ոչ թէ իրանց, այլ ջքաւորների համար: Ուր որ աշխատանքով ծանրաբեռնած, հիւանդ, որը կամ այրի մարդիկ կային, այնտեղ էին գնում նրանք և այնտեղ աշխատում, առանց մի որ և է վարձատրութեան:

Ողջէս եղբայրներից իւրաքանչիւրը ամբողջ շաբաթը առանձին էր անցկացնում. միայն շաբաթ օրերը երեկոյեան երկուսն էլ վերադառնում էին իրանց բնակարանը: Կիրակի օրերը նրանք մնում էին տանը և միասին աղօթում ու խոսակցում, իսկ Աստուծոյ հրեշտակը լչնում էր նրանց մօտ և օրհնում նրանց: Երկուշաբթի օրերը նրանք նորից գնում էին զանազան կողմեր աշխատելու և իւրաքանչիւր շաբաթ օր Աստուծոյ հրեշտակը գալիս օրհնում էր նրանց:—Մի երկուշաբթի օր, երբ եղբայրները ուղևորւում էին աշխատութեան, Աթանասը յանկարծ տխրեց և չէր ուզում բաժանւել իր սիրելի եղբօրից: Մի քանի քայլ առաջ գնալուց յետոյ նա կանգնեց և յետ նայեց: Յովհաննէսը գնում էր դլխակոր և առանց յետ նայելու: Բայց յանկարծ նա էլ, կարծես մի բան տեսնելով, կանգնեց, ուշադրութեամբ նայեց և մի կողմ թեւաւ ու առանց յետ նայելու վազեց դէպի սարը, հեռու, հեռու այդտեղից. կարես մի կատաղի գազան էր ընկել նրա ետևից:

Աթանասը զարմացաւ և գնաց այդ կողմը, որ իմանայ թէ իր եղբայրը ինչից վախեցաւ: Մօտեցաւ նա և տեսաւ կանաչ

խոտի վրայ մի կոյտ ոսկի, որ պատրաստ էր ասեղակի տակ։ Այդ բանը նկատելով, Աթանասը առնի ևս զարմացաւ եղբօր վրայ։

—«Ի՞նչից նա վախեցաւ և ինչից վախաւ»—մտածում էր նա—«ոսկու մէջ մեղք չկայ. մեղքը մարդու մէջն է։ Ոսկով կարելի է չարիք անել, բայց կարելի է և բարիք անել։ Որքան որբերի և այրիների կարելի է կերակրել, որքան մերկ մարդկանց զգեստաւորել, որքան տնանկներին և հիւանդների բժշկել այդ ոսկով։

Այժմ մենք ծառայում ենք մարդկանց, բայց մեր ծառայութիւնը շատ չնչին է, իսկ այս ոսկով կարող ենք աւելի մեծ ծառայութիւններ անել մարդկանց։

Ահա այդպէս էր մտածում Աթանասը և ուզում էր այդ բոլորը յայտնել եղբօրը, բայց նա արդէն հեռացել էր և երևի մի սև կէտ երևում էր ծովի վրայ։ Աթանասը հանեց շորերը լցրեց նրանց մէջ ոսկի, որքան որ կարող էր տանել, շալակեց և տարաւ քաղաք։

Նա եկաւ Հիւրանոցը, ոսկին յանձնեց Հիւրանոցատիրոջը և ինքը գնաց մնացորդը բերելու։ Երբ բոլոր ոսկին բերեց, գնաց վաճառականների մօտ և գնեց հող, քար ու վայտ, մշակներ վարձեց և սկսեց շինել երեք տուն—մինը՝ ապաստարան որբերի և այրիների համար. միւսը՝ հիւանդանոց անտանկների և հիւանդների համար, իսկ երրորդը՝ ճանապարհորդների և աղքատների համար։ Աթանասը երեք ամիս մնաց քաղաքում. այդտեղ դուռ երեք բարեսիրտ ծերունիներ. մէկին նշանակեց կառավարիչ ապաստարանի, միւսին՝ կառավարիչ հիւանդանոցի, իսկ երրորդին՝ հիւրընկալարան տանը։ Իր մօտ մնացել էր 3,000 ոսկի, որ և տուեց ծերունիներին, իւրաքանչիւրին 1,000 ոսկի որպէս զի սուճեռն բաժանեն աղքատներին։

Չուտով երեք տունն էլ լցուեցին ժողովրդով և մարդիկ ընտրեցին գովարանել Աթանասին։ Այդ բանը դուր էր գալիս նրան և նա չէր ուզում հեռանալ քաղաքից։ Վերջապէս եղբօր սէրը դրաւեց նրան և նա իրան վստահացնող ժողովրդին հրաժեշտ տալով և մօրը ոչ մի ոսկի չբերողնելով, միևնոյն հին հագուստով, որով եկել էր, յետ դնաց իր բնակարանը։

Աթանասը մօտեցաւ տարին և մտածում էր. «Ուրիշ չէր

գտած եղբայրս, երբ խոյս տուեց ոսկուց և փախաւ: Մի՛թէ ես նրանից լաւ չարի»:

Այդ րոպէին նա տեսաւ, որ ճանապարհի վրայ կանգնած է այն հրեշտակը, որ իւրաքանչիւր շաբաթ օր օրհնում էր լրանց: Հրեշտակը կորել էր ճանապարհը և խոտութեամբ նայում էր Աթանասի վրայ: Աթանասը այդ բանից սարսափեց և միայն այնքանը կարողացաւ ասել. «Ինչո՞ւ համար, ակը»—Հրեշտակը պատասխանեց.—«Գնա այտեղից. դու անարժան ես եղբօրդ հետ ապրելու. նրա մէկ թուխչքը աւելի թանկ է, քան թէ քո բոլոր գործերը, որ կատարեցիր գտած ոսկով»:

Իրան արդարացնելու համար Աթանասը պատմեց, թէ որքան աղքատների ու օտարականների կերակրեց, որքան որբերի հովանաւորեց... Սակայն հրեշտակը ընդունեց նրան, ասելով.—«Այն ատամնան, որ պրել էր այդ ոսկիները քեզ գայթակղեցնելու համար, սովորեցրել է և այդ խօսքերը»:

Այդ ժամանակ Աթանասի խղճը մերկացրեց նրան. նա հասկացաւ, որ Աստծոյ համար չէր անում իր գործերը, այլ աւելի իր վաստակասիրութեան համար, ուստի և լաց եղաւ ու ղջաց: Այդ տեսնելով հրեշտակը խղճաց և բաց արեց ճանապարհը, որի վրայ արդէն կանգնել էր Յովհաննէսը և սպասում էր եղբօրը:

Այդ ժամանակուանից Աթանասը այլ եւս չէր ենթարկւում սատանայի գայթակղութեանը և արդէն հասկացել էր, որ ոչ թէ ոսկով, այլ միայն ուսումնասիրութեամբ կարելի է ծառայել Աստծուն:

Եւ եղբայրները նորից սկսեցին ապրել առաջւայ նման:

Ե. Թ.





ՍՏՐՈՒԿՆԵՐ

XXXII

Հա գոլձերը այս պատմության մեջ էին, երբ մի առաւօտ շէկերի թաղուհուն ներկայացաւ նրա Մայր մրջիւնը, որ եկել էր սևերի երկրից: Այդ օրը Հաղար տեսակ լուրեր սկսեցին պատել շէկերի մէջ: Ոմանք ասում էին, որ իրը թէ սևերը ապստամբել են, կամեցել են նրան սպանելու և նա փախել է իր երկիրը ապաստան գտնելու: Մի քանիսներն էլ ասում էին, որ Մայր-մրջիւնը, զգալով իր մօտալուտ անկումը, եկել է թոյլատուութիւն խնդրի պաշտօնը թողնելու: Ոմանք էլ ասում էին, որ նա եկել է քաղաքական մեծ խորհրդին ներկայ լինելու և այլն, և այլն: Մայր-մրջիւնի յանկարծակի երևալը շէկերի հողում թագուհուն էլ մեծ զարմանք պատճառեց: Չէնց որ նա մտաւ պալատի առանձնասենեակը թէ չէ, իսկոյն թագուհին որոտտալով առաջ վազեց և առանց ողջունելու հարցրեց շտապով.

—Ո՞ր. ինչ կայ:

—Ա՛ռ այժմ ոչ մի վտանգ, բայց...

—Ի՞նչ «բայց», շուտով ասա՛.

—Շերպ մեծութիւն, խօսեց Մայր-մրջիւնը,—բանն այն է, որ Հարևան պետութիւնները սպառնում են մեզ և զանազան տեսակ ցոյցեր են անում...

—Սպառնալը գիտեմ, ասաց թագուհին,—ես արդէն գիշեր-ցերեկ մտածում եմ դրա մասին. բայց ցոյցերի մասին ոչինչ տեղեկութիւն չունեմ, ինչ ցոյցեր են...

—Մեր առաւել եղերքներին մի քանի մեծ-մեծ և լայնլայն տերևներ են կպել և բոլոր էլ լի են մրջիւններով...

—Ինչպէ՞ս, արդէն ուղարկել են նաւատորմիղները, և մեքենան են...

—Մի քանի նաւեր արշիւնաղոյն մրջիւններով են լցած, որը—ադաչալար մրջիւններով, որը—խաշարամրջիւններով, որը—սրածնոտներով, որը—կրծաններով...

—Այդ անպիտանները ինչ են ուզում մեզանից, տասը թագուհին,—բարեփոխութիւնների ծրագրի ընդունելն էր դրանց ցանկացածը, այն էլ կատարեցինք. պետութիւնների բարձրագոյն վերահսկողութիւնն էր մնացել, այդ էլ ընդունեցինք և խօսք տւինք, որ շուտով երկրի կարգը վերականգնի: Ե՛ւ ինչ են ասում:

—Ոչինչ, ձերդ մեծութիւն, բոլորովին ոչինչ: Չէնց այնպէս կպել են առւսակի եղերքին ու մնացել, երևի, ապատում են, որ նրանց պահանջներն ի կատար ածենք ու այնուհետև հեռանան մեր երկրից:

—Ի՜հ, ինչ անենք, թող այնքան ապատեն, որ իրանք էլ յոգնեն ապատելուց:

—Ոչ, ձերդ մեծութիւն, եթէ շատ շուտով չբաւեռնարկենք ծրագրի առաջարկները կատարելու, մենք կարող ենք մեծ վտանգի ենթարկուել, որովհետև նշանները շատ անմխիթար են երևում:

—Գնացէք պարձեալ սևերի երկիրը, աշխատեցէք մերոնց հանդիստ պահել. առայժմ ոչ մի կոտորած և հալածանք: Եթէ նրանք տեսնեն, որ մերոնք հանդիստ են և երկիրը խաղաղել է, այն ժամանակ բոլորն էլ կըհեռանան այնտեղից և էլ չեն շտապիլ ծրագրի առաջարկները կատարելուն... Հասկանո՞ւմ էք միտքս... եթէ մերոնք հանգստանան, նրանք էլ չեն շտապիլ և կըվերադառնան իրանց երկիրը...

—Շատ ճշմարիտ է, ձերդ մեծութիւն, բոլորովին ճշմարիտ է ձեր նկատողութիւնը:

—Բայի դրանից, աւելացրեց թագուհին,—պատգամաւորներ կուղարկէք բոլոր նաւապետների մօտ և կասէք, որ երկրի կարգը վերականգնում է և բարեփոխութիւնների ծրագրի բոլոր կէտերն էլ անվիճելի և կէտ-առ-կէտ շուտով պիտի իրագործուին:

Մայր-մրջիւնը պատրաստ էր թագուհուն եւ իր թիկնապահների հետ միասին ճանապարհ բռնած դէպի արեւելք երկիրը:

Այդ պէսքից յետոյ թագուհին շատ մտատանջութեան մէջ ընկաւ: Նա գիշեր-ցերեկ հանգստութիւն չունէր: Նրա գազանային սրտին տիրել էր ահրաւիրը:

XXXIII

Ծակայն Ձէկերի թագուհին սխալուել էր իր հաշիւների մէջ:

Պետութիւնների սպառնական նաւատորմիղի երեւալը շէկ ամբոխին վատել էր բարկութեան եւ վրէժխնդրութեան կրակով: Ձէկերը կատաղում էին, երբ տեսնում էին, որ սեւերի պատճառով օտար պետութիւնները սպառնական դիրք են բռնել: Մայր-մրջիւնը դուր էր աշխատում խաղաղացնելու իր ամբոխին: Սեւերը առաջուան պէս զարձեալ մատնում էին կոտորածների եւ հալածանքների: Տարբերութիւնը միայն այնէր, որ առաջ շէկերը առաւելապէս իրանց մեծերի հրամանով էին գործում իրանց բարբարոսութիւնները, իսկ այժմ իրանց կամքով: Թէպէտ Մայր-մրջիւնը յորդորում էր նաւատորմիղներին հեռանալ, հաւատացնելով, որ շուտով երկիրը կը հաղարձի, բայց նրանք տեղներից անդամ չեւ շարժուելու միտք չունէին:

Ընդալելով շէկ ամբոխի կատաղութեան, արդէն կազմել էր շէկերի մի փոքրիկ խմբակ, որը ընդդէմ էր իր կատաղութեան ընթացքին:

Զրկւեամ, որ խաչերն էր, որանց սկզբում մի փոքրիկ դէմ էր ընկել: Սրանց համար ծանր էր տեսնել սեւերի տառապանքները: Սրանք թէպէտ խղճում էին սեւերին. բայց ինչ կարող էին անել իրանց այնքան արիւնարբու բազմամրջիւն հարայնքի դէմ: Այս ազատամիտ խմբակը իր թիւը շատացնելու նպատակով իր դաղափարն սկզմնքը դաղտնի կերպով տանում էր ժողովրդի մէջ: Բայց այդ մրջիւնասիրական սկզմնքը չէին կարողանում ծլել շէկերի ապատաժոտ սրտերում, որովհետեւ նրանք բոլորն էլ լցուած էին ատելութեան եւ թշնամութեան թոյնով: Ձէկերը շարունակ թափում էին իրանց սրտի թոյնը խեղճ ստրուկների դլխին, բայց այդ թոյնը չէր սպառւում: Մի

օր ազատամիտ խմբակը մի կերպով ապառնալիք ուղարկեց թէ իրանց Թագուհուն և թէ Պայր-մրջիւնին, որ եթէ սևերի վիճակը չբարւոքւի շուտով, շէկերը իրանք իրանց ձեռքով կըջնջեն աշխարհի երեսից իրանց սկսին: Տեսէք, թէ բանը ո՛րտեղ է հասել, որ Հալածատ զաւակները մահ են ապառնում իրանց մօրը: Թագուհին ահռեակից չըգիտէր, թէ ինչ անի:

Նա կարգադրեց, որ հետամուտ լինեն և շուտով գտնեն իր տէրութեան յեղափոխականներին և խիստ պատժի ենթարկեն: Թագուհին ինքն իրան փնթփնթում էր և ասում.

—Մերոնք ընդհակառակը սկիսի զոլծեն միշտ ձեռք ձեռքի տաց, սկիսի աշխատեն առնել մեզ ապառնացող վտանգների առաջը և ոչ թէ անդրունդ պատրաստեն իրանց. թագուհու և հայրենիքի համար... Ողորմելին չէր իմանում, որ իր աննկարագրելի բարբարոսութիւնները անշունչ քարին էլ զզացնել են տալիս, ուր մնաց իր բազմամրջիւն պետութեան մի քանի շէկերին:

XXXIV

Քայլ այնուամենայնիւ շէկերի կատաղի ամբոխը զրպուտած էր սևերի դէմ: Ընդառելով կառավարութեան զսպելու բոլոր ջանքերին, շէկերը գանազան խոչ անկիւններում զարձեալ կոտորում էին սևերին: Իսկ նաւատորմիղները յուսոյ մի տեսակ ազօտ ջահեր էին, որոնք վառւելով հեռւից, տաւակի եղերքից, սկսում էին իրանց լոյսը ընկճած սևերի վրայ և մի վոքը ամրապնդում նրանց բեկբեկւած սրտերը:

Կէսօրւան մօտ էր:

Մի խումբ շէկեր մրջնանոցից հեռու նստած էին խոտերի մէջ և գանազան տեսակ վայրագութիւններ էին անում սևերի մասին: Նրանցից ոմանք հպարտ-հպարտ թւում էին՝ թէ քանի տասնեակ սևերի են սպանել, ոմանք գանազան անեկդոտներ էին պատմում տարուկների կեանքից և քա՛հ-քա՛հ ծիծաղում նրանց վախկոտութեան վրայ և այլն: Յետոյ խօսակցութիւնը անցաւ ծնօտների վրայ: Նրանցից ամեն մէկը սկսեց բերանը մի թիզ բաց անել և ցոյց տալ իր ծնօտների երկարութիւնը և ոյժը:

—Այս ծնօտներով դիտէ՞ք՝ թէ քանի՛ քանի՛ սևերի աղիքներ եմ դուրս թափել, ասաց նրանցից մէկը պարծենալով։

—Իսկ այս ծնօտները, աւելացրեց մի երկրորդը,—դիտէք, պարոններ, թէ քանի՛-քանի՛ սևերի մարմնի մէջ եմ խրել և արեան շատրւանները ղրկեցրել...

—Իմ ծնօտներով, ասաց մի երրորդը,—ես միանգամից երեք-չորս սևի ձագեր եմ խեղդել, իսկ դուք ինչ էք արել...

—Ի՞նչ էք այդքան դովում ձեր թոյլ և բութ ծնօտները, ասաց չորրորդը, որ բոլոր ժամանակ հեղնական դէմքով լսում էր իր ընկերներին,—այս ծնօտները չէին, որ խրել էր Ֆլանի մէջքը և տապալել գետին, երբ նա բերանը բաց էր արել, լեզուն հանել և ախ ու վախը երկինք բարձրացրել...

—Մեր ծնօտներն էլ ձերից պակաս չեն, մօտակայ թփի տակից որոտաց մի ահռելի ձայն,—մեր ծնօտներն էլ կարող են դուրս թափել սևերիդ դարշելի աղիքները...

Ձէկերը ապշած յետ նայեցին և տեսան, որ խօսողը մի սև մրջիւն է։ Արիւնը խփեց շէկերի դլխին։ Արանք կատաղած վեր ցատկեցին իրանց տեղից և կամեցան յարձակուել այդ յանդուգն սևի վրայ, երբ տեսան, որ սմեն կողմից շրջապատած են սևերով։ Սկզբում շէկերը չյիշատատացին իրանց աչքերին և այդ բոլորը երազ էր թուում նրանց։ Բայց երբ սևերը սմեն կողմից սկսեցին առաջ ընթանալ պէտի նրանց, այն ժամանակ նրանք հասկացան, որ պէտք է պատճ դնել իրանց գոված ծնօտները։

Սկսեցաւ սարսափելի ճակատամարտ։ Էլ չեմ ուզում, ընթերցող, մանրամասն նկարագրել այդ ճակատամարտը. դոյէ մի երկար ու բարակ դրոյցներով ձանձրացնեմ ձեզ։ Իմ այս ամբողջ դրուածքս, ինչպէս յայտնի է, սրեան մի պատմուածք է։ Արդէն ես մի քանի անդամ նկարագրել եմ, թէ ինչպէս են կռւում և միմեանց կատորում մրջիւնները։ Ձէկերի մեծագոյն մասը սրդէն սրիւնաթաւալ վռւած էր դետնին. իսկ կենդանի մնացածները մի կերպ վախել, ազատուել էին սևերի ծնօտներից։

XXXV

Այս լուրը ապշեցրեց շէկիկի Թադուհուն իր գահի վրայ։ Թադուհու մտքովն անգամ չէր անցել երկիր, թէ սևերը կարող են ապստամբել։ Սևերի ապստամբութեանը մի կողմից, շէկ յեզափոխականների ապառնալիքը միւս կողմից, նաւաստիների երևալը երրորդ կողմից, այս բոլորը մի այնպիսի երկիւղ ու յուսահատութիւն էին դրել Թադուհու սիրտը, որ խեղճը աղօթում էր Աստծուն և ասում.

—Տէր Աստուած, էլ ինչու՞ համար ես ինձ կենդանի պահում, մի՞թէ ուզում ես ինձ տապալել իմ գահից և ծաղր ու ծանակի առարկայ շինել աշխարհումս... Ուզարկիր իմ արքունիքը մի ժպտահայ հաւ և թող նա իր կտուցով մի ակնթարթում կուլ տայ ինձ և ջնջի աշխարհիս երեսից...

Յետոյ նա ինքն իրան կատաղում էր, փրփրում և գոչում.

—Սևերը քանի՞ զլխանի են, որ չանդգնում են ապստամբել և յարձակում գործել մերոնց վրայ, կոտորել նրանց... Այս բոլորի պատճառը Պալը-մրջի՛ւնն է... Նա անընդունակ է նաւաստի երկիրը կառավարելու։ Նա անշնորհք է, նա չիմար է, նա թոյլ է... Նա՛ է առիթ տալ սևերին։ Եթէ նա կարդին կառավարիչ լինէր, միշտ սևերին այնպիսի ահ ու սարսափի մէջ կըպահէր, որ երազել անգամ նրանք չէին կարող այդպիսի մի անհամեստ քայլ անելու... Ես նրան երկիր եմ չանձնել, երկիր կառավարի և ոչ թէ իր Թադուհու համար չիմաստասի անզուսպ պատրաստի...

Մի անգամ էլ Թադուհին այսպէս այնքան կատաղեց, փրփրեց և դառդառայ ինքն իրան, որ նրա ուղեղը և ջղերը բոլորովին յոգնեցին և նա ընկղմեցաւ խորը մտատանջութեան մէջ։ Իր առանձնասենեակում երկար նա մտածում էր, զանազան ծրագիրներ էր յօրինում չարիքի առաջն առնելու համար, երկար նա մտածում էր՝ թէ ինչպէս խաբի, քնացնի պետութիւնները և բարեփոխութիւնների ծրագրի ընդունելը «գ ը մ ո լ լ ի կ ա ս ե ր ը» ու խոպան մուտցնել տայ նրա մասին։ Ահա նա այդ մտածմունքների մէջն էր, երբ նրա քունը տարաւ։ Իսկապէս Թադուհին դիշեր-ցերեկ քուն չունէր, բայց այս անգամ նրա քունը տարաւ, կամ աւելի լաւ է ասել, ընկաւ ինքնամոռացութեան մէջ։

XXXVI

Ծ՛, Մարիէտոյի աշխարհում լինելը չլռեցաւ Թագուհին: Նրա առաջ պատկերացաւ դարհուրելի տեսարան: Մայր-մրջիւնը արիւնաշաղախ, յոգնած, դժգնած, վախել էր, եկել նրա մօտ և զեկուցանում նրան շէկերի կոտորուիլը սևերի երկրում, նկարագրում էր իր բոլոր ոյժերի խորտակուիլը: Մայր-մրջիւնը ողբագին լալիս էր և բոլոր արքունիքը օգնութեան կանչում: Ողբում էր և Թագուհին: Նա անիծում և մեղադրում էր անշնորհք և Թոյլ Մայր-մրջիւնին: Այդ ժամանակ սլաքատակոն շէկերը լուր բերեցին, որ ամբողջ դաշտը լցել է սրիւնաղոյն, ռաչպաչ, սրածնօտ և կրծան մրջիւնով: Ամենքը կատաղած գալիս են Թագուհու վրայ, որ ծակծկին, յօշոտեն նրա մարմինը, մահւան անդունդը գլորեն նրան, հիմնայատակ անեն նրա ամբողջ տէրութիւնը և նրա աւերակները հողին հաւասարացնեն, բրնձի արտեր շինեն: Թագուհին դարհուրած օգնութեան է կանչում շէկերին, բայց նրանք բոլորն էլ դաւաճանել են նրան, սևերի կողմն են անցել և նրանց հետ միասին յարձակուում են իրա վրայ: Ահա մի խումբ յեղափոխական շէկեր յարձակուում են մենակ մնացած Թագուհու վրայ, ծնօտները ամուր խրում են նրա մարմինը և արիւնը ցայտեցնում. իսկ նրանցից մէկը ամուր բռնել է նրա կոկորդից, սղմում է իր բոլոր ուժով և կամենում է խեղդել նրան: Թագուհին աղաղակում է, զոչում է, աղերսում է, որ խնայեն իրան, բայց նրա ձայնը դուրս չ՛ գալիս. նրա շնչափողը խլխռում է, ահա նա աչքերը չռեց, նրա հոգին դուրս է գալիս....

Այդ լուռ էին Թագուհին յանկարծ գարթնեց, սթափեց ինքնամոռացութիւնից: Նա ամբողջ մարմնով դողդողում էր: Նա սարսափած այս ու այն կողմ նայեց, բայց նրա առանձնասենեակում չկային ոչ դաւաճան շէկերը, ոչ այլանդակած Մայր-մրջիւնը և ոչ էլ թշնամիները: Առաջւան պէս լռաղ էր նրա արքունիքը: Թագուհին չէր լսանում—իր բոլոր տեսածը երազ էր Թէ իսկութիւն:

Հետևեալ օրը, երբ նա բոլորովին ուշքի եկաւ, հրամայեց սևերի երկիրը՝ Մայր-մրջիւնին, որ նա անյապաղ

թողնի իր պաշտօնը: Իսկ նրա տեղ ուղարկեց մի ուրիշ կառավարիչ: Յետոյ թագուհին պատգամաւորներ ուղարկեց պետութիւնների ներկայացուցիչների մօտ, հաւատացնելով նրանց, որ ինքը թագուհին անձամբ պիտի վերահսկի ի կատար ածելու բոլոր առաջարկած բարեվոխութիւնները: Բացի դրանից նա առաջարկեց սևերից հեղինակաւոր մրջիւններին, որ յորդորեն իւրաքանչիւրին խաղաղ մնալու, խոստանալով մօտ ապագայում վերահաստատել երկրի կարգը:

ՀՕՄՕ

(Կրշարաւնակելի)

Կ. Պօլիս

հետաքրքրական

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ *)

III

ինչպես են կերակրում կենդանիները

Ցերաքանչյուր կենդանի մի որոշ միջոց ունի կերակուր ձեռք բերելու համար: Մեկին օգնում է ոյժը, մյուսին խելքը, երրորդին՝ ճարպիկությունը, չորրորդին՝ խորամանկությունը և այլն... Սակայն բոլորն էլ, թէ դազան, թէ թռչուն, թէ ձուկ, թէ գեւուն՝ մի խօսքով ամեն մի կենդանի արարած իր կարգով կամ է մղում պոյտեհան համար և այդ կռւում մեկը մյուսի զոհ է լինում, կերակուրն է դառնում: Ահա թէ այդ մասին ինչ է պատմում Ֆլորիդայում—(Հիւսիսային Ամերիկա)—ճանապարհորդող մի անգլիացի.

Մի անգամ վրանիս դռնից ներս թռաւ մի գեղեցիկ բզեզ և վայր բնաւ տախտակի վրայ նստելով, սկսեց ուտել իր հետ բերած որը: Բզեզը այնպէս զբաղած էր իր գործով, որ բոլորովին չընկատեց մօտ սողացող պոյտին, որ և յանկարծ բռնեց նրան և կուլ տուեց. այդ րոպէին ներս սողաց մի մեծ թռնատուր օձ, կանգնեց, կծկվեց և վրայ հասնելով, իր

*) Տես «Ազբիւր» № 10.

ԹԹԶԱՏԻՉ ԹԱՋԱՆԻ ՍԱՏԱԿԱՅՆՈՂՆԵՐԸ

*Թուենասղ ատամնելը լսելէ գոլշէի վրկի մէջ... Ի գուր էր գոլշէը աշխատում պոկ գալ և ազատել: Թոյնը շատ շուտ ներգործեց. անցաւ մի քանի վայրկեան և գոլշէը սկսեց գողալ, վայր ընկաւ և սատկեց: Օձը կլանեց նրան և գուրս սողաց վրանից: Յանկարծ վերևից վրայ հասաւ արագիլը և կոցահարեց նրան: Օձը կծկւում էր, թուչկոտում էր, բայ էր անում բերանը, որ խայթէ, բայց ի գուր: Արագիլը մի քանի անգամ կոցահարեց նրան, ապանեց և տալա կոցում բռնած քաշիքաշ տարաւ դէպի մօտակայ մեծ ծառը. կանգնեց պրա վիշակի մօտ և սկսեց ուտել: Այդ ժամանակ մխիթարեան ծառի տակ նստել էին երկու հաւալուսն *), նրանք քաղցած են, որովհետև պաշարի պարկերը դատարկ էին: Նրանք տեսան արագիլին. մէկը բռնեց օձի պոչից և ուզում էր խլել: Արագիլը թաւ տւեց թևերը, աղաղակ բարձրացրեց. հաւալուսներն էլ իրար խառնուեցին և աղմուկ բարձրացրին. առաջացաւ կռիւ, որ քանի գնում՝ տաքանում էր... Սատկած օձը ընկած էր մի կողմ: Այդ հանդամանքից օգտուեց բուն, որ ծառի վիշակից գուրս գալով, նետս քաշեց օձին: Այդպիսով կռիւ մղողները մնացին դատարկաձեռն...*

Ահա և այդ ամենը շարունակ կրկնւում է ամբողջ կենդանական աշխարհում:

IV

թռչունների եւ գազանների բարեկամութիւնը

Ֆրիկային հանասալարհորդներից մէկը պատմում է, որ մի անգամ նա տեսել է մարդագետնների վրայ մի ամբողջ նախիր վայրի զամէշներ: Դրանք հանգիստ կերսղում արածում էին,

---

*) Այդ ճահճային թռչուններր սագից քիչ մեծ են. նրանց կզտուցները երկար և լայն են. կերակրւում են ձկներով, գորտերով և օձերով: Կերակրի պաշարը նրանք հաւաքում են առանձին պարկերի մէջ, որոնք դնեւում են կտուցների տակ:

լուկ նրանց մէջքերին վազվզում, կոպտահարում էին մի տեսակ թռչուններ և այդ բանը կարծես պարբ էր դալիս գոմէշներին: Այդ թռչունները հէնց որ նկատէին ճանապարհորդին խլուրդն աղմուկ բարձրացրին, որից և խրտնեցին գոմէշները և վախան: Ճանապարհորդը կամեցաւ իմանալ ինչ էին անում թռչունները այդ կենդանիների մէջքերի վրայ: Նա հրացանը արձակեց և սպանեց նրանցից մէկին: Բանից պարբ եկաւ, որ մի տեսակ բզէզներ գոմէշների մսի և մորթու մէջ ձու էին ածել, որոնցից պարբ էին դալիս թրթուրներ և անհանգստացնում նրանց. ահա և այդ թրթուրներին ոչնչացնում էին թռչունները և դրա վարձարէն գոմէշների բարեկամութիւնը վայելում: Նոյնպիսի բարեկամութիւն ունին թռչունները և ռընդեղջիւրների ու ընտանի գոմէշների հետ:

V

կոկորդիլոսի ծառան

Եգիպտոսում կան բազմաթիւ կոկորդիլոսներ: Տաք օրերը նրանք գլուխները պարբ են հանում ջրից և բերանները բաց արած՝ տնքտնում են արեգակի տակ: Մի ևնոյն տեղում մի տեսակ թռչուններ կան, որ այդ ժամանակ մօտենում են կոկորդիլոսին և համարձակ վազվզելով նրա մէջքի ու գլխի վրայով, մաքրում են մարմնի ցեխն ու որդերը: Այդ թռչուններն աներկիւղ մտնում են մինչև անգամ կոկորդիլոսի բերանը և մաքրում են նրա ատամները: Կոկորդիլոսը չի դիպչում այդ թռչուններին, որովհետև նրա ծառայութիւնը անհրաժեշտ է ընդ: Այդ թռչունը կոչւում է «կոկորդիլոսի ծառայ»:

VI

երկրագործ մրջիւններ

Կենդանիների մէջ կան այնպիսիները, որոնք պարապում են երկրագործութեամբ, այսինքն վարում, մշակում են երկիրը. հնձում են, ու օրայ համար պահած պատրաստում

և այլն: Այդ բանի մէջ առանձնապէս վարժ են մրջնները: Նրանք ապրում են մրջնարներում տասնեակ և հարիւր հազարներով: Իւրաքանչիւր մրջնարնում սովորաբար լինում են երեք տեսակ մրջիւններ. Ա) արու և էգ, որոնց պարտականութիւնն է ճու ածել և հոգ տանել առնելու մասին: Բ) մշակներ՝ որոնք պարապում են տնտեսական գործերով, այսինքն կրում են ծանրութիւններ, կերակրում են արու և էգ մրջիւններին, պահպանում են թրթուրներին, շինում են ճանապարհներ, մրջնարներ և այլն: Գ) զինուորներ՝ որոնց ծնօտները աւելի լայն և սուր են, այնպէս որ կարող են դրանցով խայթել և կտոր կտոր անել իրանց թշնամիներին: Զինուորների պարտքն է պաշտպանել մրջնանոցը:

Ահա և մի քանի տեսակ մրջիւնների մշակ դասակարգը պարապում է երկրագործութեամբ և այդ պատճառով էլ ըրանք կոչւում են «երկրագործ մրջիւններ»:

Դրանք ապրում են Եւրոպայի և Ամերիկայի տաք կողմերում: Երկրագործ մրջիւնները հողի մէջ փորում են դանդաղ անցքեր և սենեակներ մէկը մեսի վրայ: Սենեակներից մի քանիսը ծառայում են ապրելու, իսկ մեսները պաշարը պահելու համար:

Մշակ մրջիւնները խառը առանձնապէս կտրատելով, դեռևս հարթելով նախ և առաջ շինում են յարմարատու ճանապարհներ և ապա կրում ու ամբարում են դանդաղ հացահատիկներ ու սերմեր: Բայց դրանից նրանք մաքրում են մրջնարնի շուրջը մի քանի սաժէն տարածութեամբ և մեսո բոլորի արմատները ոչնչացնելով, թոյլ են տալիս աճելու մեսին «մրջնի ընձեռ» կոչուած խոտին, որը և իր ժամանակին հնձում են ու հատիկները հաւաքում: Եթէ մրջնարնի մօտակայքում չկայ այդ խոտից, նրանք հեռու տեղերից սերմ են բերում և իրանք անձամբ ցանում:

VII

պարտիզպան մրջիւններ

Հարաւային Ամերիկայում ապրում են մի տեսակ մրջիւններ, որոնք կոչւում են «պարտիզպան մրջիւններ» և ահա թէ

ինչու: Պլանք ահագին խմբերով բարձրանում են ծառերի վրայ և իւրաքանչիւրը մի թափի վրայ նստելով, սկսում է կրտել մի ոտ և է կտոր և բերանն առնելով՝ ծառից վար է իջնում: Ապա այդ կտորը գլխի վրայ բարձրացնելով մէկը միւսի ետևից շտապում են դէպի մրջնարանը, որին մօտենալ ժամանակ խոյն առաջ են վազում ուրիշ մրջիւններ՝ «կրտսեր մրջիւնները» և նրանց վրայից բեռը վերցնելով՝ նոքա են տանում և այնտեղ աւելի մանրացնելով վայր թափում: Իսկ առաջին մրջիւնները նորից դնում են և նորից բեռնաւորած վերադառնում: Եւ այդպէս աշխատանքը շարունակւում է ամբողջ օրերով: Մրջիւնները այդ տերևները չեն ուտում, այլ ջրացնելով փտում են առանձին սենեակներում, որտեղ քիչ ժամանակից յետոյ նրանց վրայ բուսնում են մանր սունկեր, որոնցով և կերակրւում են այդ մրջիւնները: Ամեն տեսակ տերևի վրայ չեն բուսնում այդ սունկերը և այդ պատճառով մրջիւնները հաւաքում են միայն այնպիսի տերևներ, որոնք նրանց հարկաւոր են: Մրջիւնները նրանց շինած օդանցուքների միջոցով մաքրում են այն սենեակները օդը, որտեղ սունկերն են բուսնում: Այդ օդանցուքները անձրևի ժամանակ ծածկում են: Եթէ տերևներ կրելիս ճանապարհին անձրև գայ, նրանք բեռը ձգհատաքին մրջնարանի առաջ և յետոյ արեգակի տակ ջրացնելով նոյա կրկրկին: Մի խօսքով այդ մրջիւնները վարում են ճիշդ այնպէս, ինչպէս մարդասէր պարտիզպանները:

(Կը շարունակւի)

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

32) Առաջ. Երշ. Ա. 3.

Մի բառ ունիմ ջոլս վանկանի,
Որ կազմուած է տասը տառէց,
Անուն հզօր արքայի,
Որ հնչուում է Սիւրիայից։
Եթէ կուզէք շուտ գտնել,
Անունը հզօր արքային,
Կատաչարկեմ ձեզ լուծել,
Ըստ կազմուածեան վանկային։
Առաջին վանկն անուն է
Ձատ հանքերի կատակման,
Որ շատ անգամ կազմում է
Սահման, երկու տէրութեան։
Երկրորդ վանկը ցուցական
Դերանուն է հասարակ,
Որ կըստանայ լմնատ ուսուցման,
Եթէ կարդանք հակառակ։
Խմատ այն տեղն նշանակութեան,
Ուր որ շատ մարդիկ մինչև յաւիտեան

Պիտի տանջէին, անլուռ ու անվերջ,
Զարհուրելի բոցերով անշէջ։
Ելլողով ևս ջրլողով վանկերը միասին
Եթէ կարդանք հակառակ,
Անուն է այն հօր, որ իր վեհայինն՝
Խաբելով բանեցրեց երկար ժամանակ։

33) Առաջ. Յ. Ղաբաբեանց.



—Ահա ձեզ մի խումբ քառակուսիներ՝
Եթէ կըցանկաք կատարել պատվէրը,
Պայմաններիս պէս վաւերացէք գուք,
Վճռած կունենաք իմ սրտ հաճելուն։
Տեղաւորեցէք.
Նկարիս վերին քառակուսւոյ մէջ՝
Երջանաբանական մի գրքի *) անուն,
Իսկ նրանցում, որոնք կազմում են միւս էջ
Մի այլ վերնագիրը երկասիրութեան՝
Պատկանող անմահ Գրիգոր Երծրունեան։
Ապա, յաջորդող միւս երկուսիկան
Քառակուսւոյ մէջ՝ հինգ հազար երկու
Պարունակեցէք տասերի շնորհիւ։
Իսկ այնուհետև՝ վերցրէք մի թուչուն

*) Ծուսերէնից թարգմանած։

Գու, ազատասէր, վռակեցէք անվերջ
Յաջորդ շարքի չորս քառակուսւոց մէջ։
Այսքանից յետոյ, ժրաջան մանուկներ,
Առանց ձանձրոյթի, քաջ և անվեհեր՝
Վերցրէք բազմերախտ Բաֆֆու վէպերից
Մէկն և դրեցէք մնացածների մէջ։
Սակայն այս բոլոր՝ այնպէս ընտրեցէք,
Որ իմ նկարի աջ քառակուսւոց
Գլխի գումարով՝ ամսագիրը գոնէք.
Իսկ ձախի միացմամբ՝ ոչ հեռու տարած
Մի շաբաթաթերթ։

—

34) Առաջ. նոյնի

Երկվանկանի մի բառ գտէք՝
Բաւարանութեան բառարանում,
Որին կուտէ՝ աղքատ, թէ բկգ
Երբ ամռան շոգից կ՝ նա այրւում։
Դրա առաջին վանկըն անվերջ
Կայ՝ քերականութեան յանկի մէջ,
Իսկ երկրորդից միշտ գաշտերում՝
Հրացաններով գուք շատ կը որսում։
Սիրուն մանկունք, ձեզանից ոմ՝
Գիշ այդիներում ըղձանել կ՝,
Տեսած կրկնի հաղարներով
Նրան, որի մասին ասա տալու կ՝։



ԵԳԻՊՏՈՒՀԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

ՏԻԿԻՆ ԿԱՏԱՐԻՆԷ ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆՑ

Տիկին Կատարինէ Եւանգուլեանց վախճանեցաւ սոյն տարւոյ սեպտեմբեր ամսոյ 2-ին, խորին ցաւ պատճառելով թէ նրա ծանօթներին և բարեկամներին և թէ հայ հասարակութեան այն անդամներին, որոնք հանգուցեալի պէս նուիրուած են ազգային գործերին։

Նորոգ հանգուցեալը իր կրթութեամբ և պատիւարակութեամբ պատկանում էր մեր հասարակութեան կանանց այն անդամներին, որոնց նպատակն է իր մերձաւորի բարօրութիւնն ու երջանկութիւնը։ Այս նպատակով անշեղ ընթացել է տիկ. Եւանգուլեանցի քսանևվեցամեայ գործունէութիւնը ազգային ասպարէզի վրայ։ Հայ մանուկները նրան ճանաչում էին դեռ այն ժամանակից, երբ տակաւին դեռատի օրիորդ մտաւ ազգային պատիւարակութեան ասպարէզը, իսկ յետոյ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ժրաջան անդամներից մէկը, որ ամբողջապէս նուիրեց իրան այդ սրբազան գործին։ Մանկան զգայուն սիրտը, որ բնազդմամբ համակրութիւն է դգում դէպի իր բարերարը, այս անգամն էլ յստակօրէն չեղաւ. նրանք առանձին հատուցմունքն էին տածում դէպի նրբազգայ տիկինը։ Հանգուցեալը գիտէր պնահատել նրանց սէրն ու հաւատարմութիւնը։ Ո՛ր գթասիրտ մայրը կարող էր վերաբերել այն կարեկցութեամբ դէպի իր զաւակը, որպէս սովոր էր այդ անել տիկին Եւանգուլեանցը դէպի իր հովանաւորութեան յանձնուած մանուկները։

Սկսած այդ սէրն ու հաւատարմութիւնն էր նրան դրդում չընդունել ոչինչ ջանք՝ թերևս ի վնաս իր առողջութեան, հայ մանուկների ապագայ բարօրութեան համար։ Ինքը նա մայր լինելով և լաւ ըմբռնելով մօր ազդեցութիւնը մանկան կրթութեան գործում, նա այդ մայրական սուրբ զգացումները իր սիրական տանից դուրս գործ էր դնում վերաբերութեամբ ուրիշ ընտանիքի զաւակների, որոնք բախտ էին ունենում կրթել նրա հովանաւորութեան տակ եղած դպրոցներում։

Սրան ապացոյց մանկական այն պարագան, որ 10 տարի սրանից առաջ գտնուում էր Զրկինենց եկեղեցու դաւթում, որտեղից իր անձնական աշխատանքը և մայրական հոգատարութիւնը տ. Եւանգուլեանցը

տեղափոխեց ս. Նշան եկեղեցու դպրոցը և Հայուհեաց ընկերութեան հաշուով հաստատուած կար ու ձևի ուսումնարանը։

Սոյն այս զգացումներն էին մղում հանգուցեալ տ. Եւանգուլեանցին մասնակցելու համերգներին և թատերասիրաց ներկայացումներին այն ժամանակն էլ, երբ նրա առողջութիւնը խանգարուած էր և նա աւելի կարօտ էր հանգստութեան, քան թէ հոգեկան յուզմունքների։

Այդ իսկ զգայմունքով ողևորուած սիրինը ստանձնում է հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեան լիմբագրական մասնաժողովի անդամակցութիւնը, որպէս զի իւրովանն նպաստէ հայ մանուկների ընթերցանութեան գործին։ Հանգուցեալը մօտիկ ծանօթ լինելով ուռւս և արտասահմանի մանկական գրականութեանը մեծ Նառայութիւն կարող էր մատուցանել ընկերութեան նպատակներին. սակայն նրա անդամակցութիւնը այդ մասնաժողովին երկար չտևեց։ Բայց և այնպէս արդիւնաւոր եղաւ նրանով, որ ներկայացրեց Մասնաժողովին թարգմանելու համար ընտիր մանկական գրքերից մի քանիսը։ Այդ գրքերից իր ժամանակին լոյս տեսաւ Ռօբինզոն Կրուսօն։

Միևնոյն ժամանակ այդ ուղղութեան տէր լինելով, հանգուցեալը մեծ համակրութեամբ ողջունեց «Աղբիւրի» լոյս աշխարհ երևալը, թէև ոչ մի աշխատանքով չմասնակցեց նրան, բայց և այնպէս միշտ նախանձախնդիր էր հանդիսանում նրա յաջողութեան և բարգաւաճման։ «Աղբիւրի» խմբագրութիւնը չունի սովորութիւն մոռանալու հայ ազգի համար գործող անձանց, մանաւանդ եթէ այդպիսիք միևնոյն ժամանակ եղել են նրա բարեկամներ ու չատագովներ։ Այս իսկ զգայմունքով լցած, մենք մեր պարտքը համարեցինք զետեղել այս համարում տ. Կատարինէ Եւանգուլեանցի պատկերը համառօտ կենսագրական ակնարկներով նրա գործունէութեան մասին իբրև մի անձի, որ եղել է ապագային դաստիարակութեան ամենաջերմեռանդ բարեկամ։

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՋԻ ԸՆԿԱՑԱԿՈՒԹԵԱՆ ԶԳԱՑՄՈՒՆՔԻ ՁԵՐԹԵՑՆԵԼԸ

Հարիւր առողջ երեխաները բնութիւնից օժտուած են անչափ ուրախութեան կենդանի զգացմունքով. մի այն աղջկերանց մէջ նա սովորաբար վճռականապէս և եռանդուն կերպով չի երևում, ինչպէս տղերանց մէջ, որոնք մի որ և է անարդարութիւն տեսնելիս՝ կարողանում են և արտայայտում են իրանց զայրոյթը։ Դա գլխաւորապէս նկատելի է տանը, որտեղ չանցանքների և շփման դէպքերը աւելի չաճախ են պատահում, քան թէ ուսումնարանում։ Եւ եթէ ուսու-

ցիչը մտածէր աշակերտներին իրաւունք տալ, որ վատ վարմունքների համար իրանք պատիժներ նշանակէին, նա կըզարհուրեր նրանց պատուհասների խստութիւնից։

Իսկ ինչո՞ւ, հարց է ծագում, աշխարհումս այդքան անարդարութիւն և խաբեբայութիւն կայ, երբ ինքը բնութիւնն է այնպէս պարզ և վճռականապէս իր պատիրանը դրել իւրաքանչիւր մարդու սրտի մէջ։ Իսկ նրանից, որ մենք, հասակաւորներս, երեխայի մէջ ամէն կերպ խեղդում ենք անաչառութեան զգացմունքը, այդ զգացմունքը սպանում ենք, պահանջելով, որ երեխան վիրաւորանքները անտրտունջ տանէր և ենթարկուէր վաղուց անարդար յաւակնութիւններին։

Բացատրենք այդ կեանքից վերցրած օրինակներով։

Ձմեռը առաջի անգամ ձիւն գալիս փոքրիկ Անդրէասը կամենում էր անպատճառ սահնակով զբօսնել։ Բայց մէկը չըկայ, որ նրան տանի. մեծ եղբայր Գրիգորը վաղուան պատերի պատրաստելովն է զբաղւած և եռանդով գրում է։ «Փոքր ինչ համբերի, Անդրէաս»,—ասում է մայրիկը. «երբ Գրիգորը իր դասը վերջացնի, քեզ սահնակով զբօսնելու կըտանի»։ Բայց Անդրէասը անհամբեր է. նա անդադար եղբօր մօտ է վազում և հարցնում, շո՞ւտ կըվերջացնես։ — «Չանգիստ թող ինձ»՝ պատասխանում է Գրիգորը դժգոհութեամբ, «դու ինձ խանգարում ես»։ Բայց պարզ է, Անդրէասի ցանկութիւնն էր, որ եղբայրը աշխատանքը թողներ և խաղայն նրա հետ դուրս դնար։ Դրա համար նա սկսում է գուալ, սեղանն է շարժում, վերջապէս սեղանի վրայից թանաքամանը վերցնում է ու փախչում։ Գրիգորը նրա հետևից է վազում, սկսում է կռիւը, որի արդիւնքը լինում է յատակի վրայ թափած թանաքը։ Մայրը զարհուրում է և յարձակւում է Գրիգորի վրայ։ «ԵՒա՛յ, նայիր, ինչ արեցիր»։

—Ես մեղաւոր չեմ, որ Անդրէասը թանաքամանը տապալեց։ Առանց թանաքամանի ես դրել չեմ կարող։

«Իսկ չէ՞ որ դու մեծ ես, Անդրէասը դեռ մի չիմար երեխայ է. նա թանաքամանը իրան կամքով կըտար քեզ, եթէ դու նրանից կարգին խնդրէիր, իսկ դու նրա ձեռքից խլում ես։ Ամաչիր»։

—Իսկ ինչո՞ւ է նա սեղանի վրայից վերցնում, երբ ես գրում եմ։

«Լաւ, ի սէր Աստծոյ։ Եթէ դու բարի երեխայ լինէիր, եղբօրդ յանկութիւնը կըկատարէիր և մի տասրոպէ նրան ման կածէիր, իսկ դասդ յետոյ կըվերջացնէիր»։

—Նախ հարկաւոր է դասերը պատրաստել և յետոյ խաղալ, այդ դու ինքդ ես ինձ ասել։

«Այո, ես ասել եմ, բայց ես այն էլ եմ ասել, որ պէտք է միշտ զիջող լինել. Յոհեմը միշտ զիջանում է։»

Մօր պատիւն խստական խօսքերի միտքը իսկապէս այս է, «Գրիգոր, չէ՞ որ դու գիտես, որ Անդրէասը ինձ չէ լսում. եթէ նա մի բան է կամենում, չի հանգստանում մինչև որ նրան բաւականութիւն չեն տալիս։ Ուստի, ինձ

ահաւոր հիւանդներից ազատելու համար, դու պէտք է ինձ պէս նրա համար հաճելի բան անես»։

Քայց եթէ այսպիսի հայեացքը տիրապետող լինէր, եթէ որ խոհեմը ստիպուած լինէր խոնարհել անխոհեմին և միշտ նրան պիջանէր, այն ժամանակ ինչ դուրս կըզար դրանից. անխոհեմութիւնը աշխարհ կըկառավարէր։

Փոքր երեխաների բռնութիւնը դէպի մեծերը, և ընդհակառակը, ինչպէս ընտանիքում, նոյնպէս և դպրոցում, շատ սովորական երեւոյթ է։

Երկու քոյրեր միասին դպրոցից տուն էին դնում։ Փոքրիկը, Հեղինէն, տանում է արևակալը և բարկանում է, որ բոլորովին իզուր է վերցրել իր հետ։ Ահա, արևակալը վերցրու,—ասում է նա քրոջը. «պահէս տարաւ»։

Ըդի իմ գործը չէ,—հակառակում է Վարդուհին. դու վերցրիր, ուրեմն և տար։

«Ես առաւօտեան էլի տանում, իսկ այժմ քո հերթն է տանելու։

—Երբ քո արևակալը ինձ հետ վերցնեմ տանեմ, այն ժամանակ քեզ էլ սպասել տանեմ։

«Դու չես վերցնում... Որ այդպէս է, ես կըթողնեմ փողոցում։» Այս խօսքերից յետոյ Հեղինէն արեւակալը դնում է մօտիկ տան մօտ և փախչում։ Վարդուհին արևակալը չի կամենում վերցնել, բայց հէնց այստեղ նրա մատուցմը լսւում են մօր բարկացած խօսքերը. «Ինչպէս, արևակալը կորաւ։ Եւ դու 13 տարեկան աղջիկ, փողոցումն ես թողնում։ Հեղինէն չիմար երեխայ է, նա դեռ չի հասկանում, որ արևակալը փող արժէ։ Գնա այժմ և փնտրիր։ Եւ, լսում ես, առանց արևակալի չըհամարձակուես տուն գալ»։ Այս բոլորը կենդանի կերպով երևում է Վարդուհուն և նա ակամայից քաղց թողած արևակալը վերցնում է և տանում։ Իսկ Հեղինէն նկատելով այդ, խոյզն և եթ վերադառնում է և, ծիծաղելով, թուչկոտալով, դնում է քրոջ հետ։ Նա երբէք այնպէս չիմար չէ և պիտէ, որ մայրը կըպահանջի ոչ թէ իրանից, այլ ասելի համաձայնող Վարդուհուց։

Աւելացրէք և այն, թէ ինչպէս երեխան ծնողների կողմից չանկարծակի յաճախ վիրաւորանքների է ենթարկուում, որոնք հանգամանքների մէջ մտնել հարկաւոր չեն համարում, որոնք տեղիք են տալ նրա այս և այն վարմունքին։ Թէ ինչպէս յաճախ նրանից լսւում է արդարանալու ամեն մի միջոց, ինչպէս մեղքի է փոխուում բոլորովին բարի ցանկութիւնից չանկարծակի ծագող վատ հետևանքը,—և դուք կըհասկանաք, որ անաչառութեան զգացմունքը երեխայի մէջ անպատճառ պէտք է կորչի և որ, վերջապէս, նա միւսների հետ կըվարուի այնպէս, ինչպէս նրա հետ են վարուում։ Առաջ բերենք այդպիսի վարմունքները տեսականապէս պատկերացնող մի քանի օրինակներ։

(Կըշարունակուի)

Ա Ն Տ Ո Ն Ր Ո Ւ Բ Ի Ն Շ Տ Ե Յ Ն

Սոյն թվի նոյեմբերի 8-ին մի տարին լրացաւ այն օրից, երբ վախճանեց Ա. Րուբինշտեյնը Պետերբուրգում, 65 տարեկան հասակում։ Նա ծնուել էր 1829 թվի նոյեմբերի 18-ին, Վոլինի նահանգի Վախուատինցատեղում։ Հռչակաւոր երաժշտագէտի մայրը առաջինը սկսեց իր երկու որդկերանց՝ Անտոնի և Նիկոլայի մէջ նկատած երա-



ժշտական տաղանդը նկատել և ամենայն ջանք գործ դնել առաջ մղելու նրանց։ Սրանք մանուկ ժամանակից ընտանիքով տեղափոխուեցին Մոսկուա, ուր երկու եղբայրները պարապում էին երաժշտութեամբ

Վիլուան երաժշտական մօտ։ Ինն տարեկան հասակում Անտոնը հրապարակային նուագեց Մոսկուայում։

1839 թ. ին նա Պարիզ գնաց, ուր սկսեց նուագել յայտնի երաժիշտ Լիստի առաջ։ Նրա փառքի հասած շրջանում։ վերջինս անկեղծաբար Ռուբինշտէյնին մեծ ապագայ էր գուշակում։ Մեյերբերի խորհրդով երկու եղբայրն էլ երաժշտութեան թէօրիան ուսումնասիրեցին Բերլինում յայտնի Դէնի մօտ, որ Գլինկի ուսուցիչն էր։

Արտասահմանում նուագահանդէսներ տալուց յետոյ, Ռուբինշտէյնը 1848 թ. ին վերադարձաւ Ռուսիա և սկսեց իր փորձնական ստեղծագործութիւնները, որոնք են «Դիմիտրի Դոնսկոյ», «Սիբիրեական որսորդ» և այլն։ 1859 թ. ից արդէն սկսւում է Ռ. Ռուբինշտէյնի օպտակար գործունէութեան շրջանը։

Մեծ Իշխանուհի Ելենայ Պաւլովնայի հովանաւորութեան շնորհով, Ռուբենշտէյն ուսական երաժշտութեան և Կոնսերւատորիայի պլխաւոր հիմնադիրը դարձաւ Պետերբուրգում (1862), որի տնօրէնն էր մինչև 1867 թ. ը։

Ռուբինշտէյնի հանճարը բազմակողմանի էր. նա ունի շատ երաժշտական աշխատութիւններ։ Նրա հեղինակութիւնները տարածւած են պլխաւորապէս Գերմանիայում, ապա Լոնդոնում, Պարիզում և Ամերիկայում։ Նա ուր գնում էր, թէ Ամերիկա, թէ Աւստրիա և թէ Սպանիա, հիացում էր սլատճառում։ Իսկ ամենից վերջը Ռուսիայում սկսեցին գնահատել նրա երաժշտական հանճարը։ Նրա «Դէմոն», «Մակաբէյ» և այլ ստեղծագործութիւնները ուրս հասարակութեան սիրած օպերաները դարձան։

Ռուբինշտէյնի բնութիւնից օժտւած ձիրքը ամենայն տեղ յաջողութիւն էր պտնում։ Սովորաբար ևս բախտ ունեցաւ հիւր ընդունելու մեծ երաժշտագէտին և աբանչեայաւ նրա տաղանդով։ Ի միջի այլոց նա մի նուագահանդէս տւեց, որի եկամուտի մի մասը յատկացրեց Թիֆլիսի Հայոց հրատ. Ընկ. օգտին։

«Աղբիւրի» նախընթաց №№-ի հանելուկների և առաջարկութիւնների բացատրութիւնները. 16) Երեսայ. 17) Տրեխ. 19) Երկիւղ. երկիւղ. 20) Հայկ, հայ. 21) Գողթան, գող, թան. 22) Գուլթան. 23) Ռուս, ուռւս, 25) Քամի, քամ, ամի. 26) Լէշ, Լշ, 27) Տուփ փուք։

ԳՈՎԱՍԱՆՆԱԿԱՆ ՊԱՐԳԵՒ ՏԱՐԱԶԻՆ

Փիւն ի նաեւէն նախարարութիւնից № 18576 սեպտեմբերի 12-ից պաշտօնապէս հաղորդում են մեզ մի յայտագրով.

Տպագրական գործի հանճառուսական առաչին ցուցահանդիսում, որ կայացաւ Պետերբուրգում գարնան ներկայ 1895 թ., վճռած է ձեզ, պատկերազարդ գեղարուեստական Տարազ շաբաթաթերթը հրատարակելու համար, ԳՈՎԱՍԱՆՆԱԿԱՆ ՊԱՐԳԵՒ։

Իսկական գովասանական թուղթը կարկի ձեզ նրա պատրաստելուց, իսկ միևչեւ այն, օրէնքի զօրութեամբ (յոդ. 249 արդ.) իրաւունք է դրւում ձեզ վերադիչեալ պարգեւը ստանալու համար յայտարարել եւ դիմատակել ձեր ծանուցագրերի, ցուցանագրերի վրայ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տիկ. Կատարինէ Եւանդուլեանց (պատկեր)։ Ձշգրիտ անց.—Ե. Թովմեան։ Ընշի խաղերը (ժողովրդական մոտիւներ)—Ա. Խաչակին։ Թռչնակի վիշտը—Թարգմ. Արմենուհի։ Եանկիի նամակները—Թարգմ. Յովհ. Օհանեան։ Երկու եղբայր (Ն. Տոլստոյից)—Ե. Թ.։ Ասրուկներ (շարունակ.)—Չօմօ։ Կենդանիների կեանքից. I. Կենդանիների դաղթականութիւնը. II. Կենդանիների ճանապարհորդութիւնը (կրշարունակի)—Հանելուկներ, առաջարկութիւններ։

Բ. Բաժին.—Կենսագրական ակնարկներ. Տիկ. Կատարինէ Եւանդուլեանց։ Երեխաների մէջ անհատութեան զգացմունք զարթեցնելը (կրշարունակի)։

Անտոն Ռուբենշտեյն (պատկերով)։

Խմբագիր-Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Ազիւրի ներկայ №-ի հետ ուղարկում է առաջիկայ 1896 թուականին մեր թերթերին բաժանորդ գրուողների համար պատրաստած նամակներ և ծրարներ: Խնդրում ենք բաժանորդ գրել ցանկացողներին բարեհաճեն իրանց հասցէները գրել ՊԸՐՋ և ՈՐՈՇ:

Ազատիկ բաժանորդներ մենք չենք ընդունում և հէնց այդ պատճառով մենք մինչև անգամ չենք էլ լիշեցնում, մեր այն բաժանորդներին, որոնք զանազան պատճառաբանութիւններով խնդրել են մեզ ուղարկել մեր թերթերը, խոստանալով վճարը այս կամ այն ժամանակամիջոցում հատուցանել, իսկ մինչև այժմ չեն էլ վճարել իրանց պարտքը:

Մենք մեր կողմից երբէք ոչ ոքի չենք ուղարկել Ազիւր կամ Տարազ նրանց, որոնք ցանկութիւն չեն յայտնել մեր թերթերին բաժանորդ լինել: Այդպէս էլ պիտի շարունակենք այսուհետև: Մեր այդ սովորութիւնը դիտեն մեր մշտական բաժանորդները:

Ուստի նրանք, որոնք կամք ունին վերանորոգել իրանց բաժանորդագրութիւնը, կամ նրանք, որոնք կրցանկանան այսուհետև բաժանորդ գրել Ազիւրին, Տարազին թող հաճին ամսագիրը և չքսսսել դեկտեմբերի վերջերին գրել, ուր միաժամանակ շտեղը ստորագրելով, խմբագրութեան գրասենեակում հասցէները շտապ մատեան մուծելիս յատուկ պատահում են սխալներ:

Աւելորդ չենք համարում դեկտեմբեր, որ ներկայ 1895 թ. Ազիւր-Տարազ մանուկ դաւանող երբ ճանապարհել են աւանձին խնամքով և ամբողջ տարւայ ընթացքում հազիւ 4 թէ 5 անգամ պատահած լինի թիւրիմացութիւն: Բաժանորդի պահանջին իսկոյն բաւարարութիւն տալով, ստուգել ենք և յանցաւորը ոչ մեր գրասենեակն է եղել և ոչ Թիֆլիսի պոստատունը...

Խնդրում՝ ենք մեր մշտական բաժանորդներին Ազիւր և Տարազ տարածել իրանց շրջաններում:

Աղբիւր - Տարազի 1896 թ. պրեմիաները

ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ մինչեւոյն հասցէով բաժանորդ գրուողը կրնայ ԱՂԲԻՒՐԻ № 1-ի հետ հետեւեալ պրեմիաները.

1

ԳԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ ԱԼԲՕՄ-ԱԼՄԱՆԱԽ

Պատկերներ եւ նկարներ, մի ստար շքեղ հրատարակութիւն։

I Վեց տիրոհիներու վերապետներ։
II Հայաստանի բարձրաստիճան հոգեւորականներ։
III Վեց պետութիւններու նախարարներ, դեսպաններ։
IV Հրապարակագիրներ։
V Քաղաքական գործիչներ։
VI Հայաստանցիներ։
VII Հայաստանի տեսարաններ։
VIII Վեց պետութիւններու մայրաքաղաքներ։
IX Զէյթունն, կիլիկիա։
X Հայաստանի քաղաքներ։

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ գեղարուեստական ալբօմ-ալմանախը ստանալու համար պէտք է ուղարկել 60 կ. (կարելի է եւ պօտոն մարկանեռով)։

(Այդ հրատարակութիւնը առանձին արժէ 3 ր.)

2

ԱՆՎՃԱՐ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ

Մեծադիր (28+14 ս.) շքեղ պատկերը ճեմասրահու վրայ։

Գեղարուեստական ոգեշնչեալ մի գործ Լանգռնում պատրաստուած, փառաւոր եւ անհրաժեշտ զարդ ամեն հայի տան։

Պատկերը պէտք չունի առանձին շրջանակի, բոլորովին պատրաստ է ունի ընծայուելու եւ ուղարկուում է բաժանորդներին (չունաւորի 1-ից հեռու առանձին խնամքով պատրաստուած կրկնակի արկղների մէջ։

Այդ պատկերն ստանալու համար պարտաւոր է վճարել միայն 2 ր.։

(Ճեմասրահու վրայ այս պատկերն առանձին արժէ ճանապարհածախսով 6 ր.)

Բացած է առաջիկայ **1896** *թ. բաժանորդագրութիւնը*

պատկերազարդ **ԱՂԲԻՒՐ** *ամսագրի և* **ՏԱՐԱԶ** *շաբաթաթերթի*

ԿՀՐԱՏԱՐԱԿԻՒՆ ՆՈՅՆ ՕԽԼՂՕՒԹԵԱՄԲ, ՓՐԱՆՍԻՈՎ, ԳԻՐՔՈՎ ԵՒ ԱՁԼՍԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ հանդէսները №№-ը հրատարակի վրայ են. բնթերցողն անշուշտ փափաքն ունի կրկերատակ պերճ խօսքերին: Հինց այդ պատճառով ոչ մի խոստում չենք անում առաջիկայ տարւայ համար: Կաշխատենք, որքան հնարաւոր է, որքան կարող ենք մեր ընթերցողներին գոհ անել:

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ բաժանորդագրութիւնն ունի ևս ճոխ ու բազմակողմանի լինելու համար կարևոր հատկութիւններ արած են:

ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶԻ առաջիկայ 1896 թ. համար կլուհներ, գործակատարներ արդէն ունեցած են Լոնդոնից, Պարիզից, Իտալիայից մեծ քանակութեամբ:

ՏԱՐԱԶԻ ԿԱՄԱՑԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐԸ

Տարեկան պատկերազարդ հանդէս մանկանց համար

Տարեկան պատկերազարդ հանդէս մանկանց համար

Տարեկան պատկերազարդ հանդէս մանկանց համար

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

ԱՂԲԻՒՐԻ նախկայ №-ի հետ ուղարկում է 1896 թ. ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ յայտարարութիւնը։ Մենք պիտանի ենք տալիս ամսագրականից աւելի ուշ բացինք առաջիկայ տարուայ բաժանորդագրութիւնը, կամենալով նախ հրատարակել մի քանի նմուշներ այն նախապատրաստական աշխատութիւններից, որ մենք արել ենք առաջիկայ տարին մեր թերթերը աւելի շքեղ հրատարակելու համար։

ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶԸ հայերիս մէջ չունենալով իրանց մրցակից, մենք ձգտում ենք մրցել մայրաքաղաքներում հրատարակուղ նոյնանման օտար թերթերի հետ, իսկ թէ որ առաձեռն կատարացել ենք մեր դրծը նրանց բարձրութեան հասցնել, այդ թողնում ենք անաչառ դեղարուեստագէտին և ընթերցողի դատաստանին։

Ամենայն յոժարութեամբ առաջ կրատանենք մեր ստանձնած դրծը անձնուիրութեամբ և ամեն պահարերութիւն չենք խնայիլ, անընկրկայ և վճռակ լինելով, որ նկատակը ինչքան էլ կամենան՝ չեն կարող վահանի տակ ծածկել։

Նայն իսկ մեր հակառակորդներին էլ, մենք հաւատացած ենք, շատ թէ ուշ մեր դրծը ստիպել կրատայ խոստովանել, որ լրատու ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶԸ դեղեցիկ են, շքեղ են, ընթանում են անպատման բարի ուղիով, և միմիայն մեր նպատակն է անկեղծարար ծառայել հայ գրականութեան և դեղարուեստին։

Իսկ մինչև այդ միաձամայն խոստովանութիւնը՝ մենք յառաջ կրշարունակենք մեր դրծը, անհաշտիլ թշնամով կռուակցական ազուշ պրպտած անարդար, երբեմնակի այն ծիծաղկները, որ մեր հակառակ մամուլը մերթ ընդ մերթ մեր հասցէին ուղղում է։